

ՏԵՂԵԿԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ (ՀԱՄԱՐԺԵՔ) ՍՆՈՒՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Միջոցառումները	Ժամկետը	Միջոցառման կատարման ընթացք
1.	Կրճքով կերակրման խրախուսման հարցերի համակարգող մարմնի ստեղծում, նրա գործունեության կարգի և գործառույթների շրջանակների սահմանում	2016 թ.	ՀՀ առողջապահության նախարարի 05.12.2016թ. N3584 հրամանով հաստատվել է կրճքով կերակրման խրախուսման հարցերը համակարգող խումբը, գործունեության կարգը և գործառույթների շրջանակները
2.	Կրճքով կերակրման խրախուսման հարցերի համակարգող մարմնի կողմից կրճքով կերակրման իրավիճակի պարբերաբար ուսումնասիրություն, տեղեկատվության վերլուծություն և համապատասխան առաջարկները ներկայացնելը	2016 թ.	ՀՀ առողջապահության նախարարի տեղեկալի դեկլարությամբ կայացած միջսեկտորալ աշխատանքային խմբի նիստին քննարկվել է «Երեխաներին կրճքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) դրույթների կատարման մոնիտորինգի արդյունքները, քննարկվել խախտումների պատճառները, տրվել են հանձնարարականներ՝ ուղղված կրճքով կերակրման իրավիճակի բարելավմանը:

3.	«Մանկանը բարեկամ» նախաձեռնության շարունակականության ապահովում	2016 թ. և շարունակական	1.Սույն թվականի հոկտեմբերին Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ-ի կողմից (Յունիսեֆ, ԱՀԿ) կազմակերպված համաշխարհային խորհրդաժողովին՝ նվիրված «Մանկանը բարեկամ» նախաձեռնության շրջանակներում ձեռք բերված փորձին, և հետագա զարգացումներին, որի շրջանակներում ՄԱԿ-ի կառույցների կողմից պլանավորվում է վերանայել «Մանկանը բարեկամ» նախաձեռնության գործելակարգը և ուղեցույցները ու առաջարկվում է իրականացնել նախաձեռնության ներդրումը նոր ընթացակարգերին համապատասխան: Վերջիններս, ըստ ԱՀԿ-ի, կտրամադրվեն 2017թ, որից հետո կպլանավորվի «Մանկանը Բարեկամ» նախաձեռնության ներդրումը վերանայված ընթացակարգերին համապատասխան:
4.	«Մանկանը բարեկամ» կոչում ունեցող բժշկական կազմակերպությունների վերազնահատում	2016 թ. և շարունակական	Մշակվել է «Երեխաներին կրճքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի և «Կրճքի կաթի փոխարինիչների վաճառահանման միջազգային օրենսգրքի» մոնիթորինգի ձեռնարկ, որի միջոցով իրականացվել է Հանրապետության՝ երեխաների բուժօգնություն իրականացնող բժշկական հաստատությունների (այդ թվում «Մանկանը բարեկամ» կոչում ունեցող) մոնիտորինգ:

7.	Ծնողական կրթության իրականացում, մայրական դպրոցի կայացմանն ու տարածմանն ուղղված միջոցառումների խթանում	2016 թ. և շարունակական	<p>1. ՀՀ առողջապահության նախարարի 12.06.2016թ. N1423-Ա հրամանով հաստատվել է «Առողջության առաջնային պահպանման հաստատություններում ծնողական կրթության կենտրոնների աշխատանքի կազմակերպման գործելակարգը, ծնողական կրթության դասընթացի ծրագիրը և երեխայի առողջության անձնագրի լրացման կարգը», որով կանոնակարգել է մարզերում ստեղծված «Ծնողական կրթության կենտրոնների» աշխատանքները, որտեղ կանոնավոր կերպով անց են կացվում դասընթացներ՝ ըստ հաստատված ժամանակացույցի:</p> <p>2. ՀՀ առողջապահության նախարարի 22.02.2016թ. No 504-Ա հրամանով հաստատվել է վաղ հասակի երեխաների սնուցման, խնամքի և անվտանգության հարցերի խորհրդատվական փաթեթը ծնողների համար և ուղեցույցը բուժաշխատողների համար:</p>
8.	«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) և այլ իրավական ակտերի շրջանակներում մանկան սնուցման վերաբերյալ տպագրվող գրականության և մանկան սնուցմանն անդրադարձող կայքերի բովանդակության դիտարկում	2016-2017 թթ.	<p>ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N326-Ն որոշմամբ հաստատվել է «Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին կրծքով կերակրումը խրախուսելու ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի համաձայնեցման և լիազորման կարգը», որի շրջանակներում իրականացվել են համապատասխան գործառույթներ՝ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին ոչ համապատասխան տեղեկատվության տպագրությունը մերժելու, ինչպես նաև ինտերնետային կայքերում առկա՝ ՀՀ օրենքով արգելված գովազդի հետ կապված համապատասխան վարչական պատասխանատվություն կիրառելու ուղղությամբ:</p>

9.	<p>Իրազեկման միջոցառումներ՝ ուղղված բուժաշխատողներին, համայնքին, ընտանիքին, ծնողներին, մայրերին/խնամողներին՝</p> <p>1) վաղ հասակի երեխաների բուժօգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունների անձնակազմի իրազեկում օրենքի դրույթների վերաբերյալ.</p> <p>2) ծնողների/խնամողների համար երեխայի սնուցման և խնամքի հարցերին նվիրված տեղեկատվական նյութերով ապահովում (գրքույկներ, հուշաթերթիկներ և այլն).</p> <p>3) ՋԼՄ-ների միջոցով ծնողների իրազեկմանն ուղղված սոցիալական մոբիլիզացիայի ծրագրերի իրագործում (հեռուստահաղորդումներ, ֆիլմեր, ելույթներ, ՋԼՄ-ներում տպագրված հոդվածներ և այլն)</p>	2016 թ. և շարունակական	<p>1.Ի կատարումն Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատվել և պետական գրանցում է ստացել «Կրծքով կերակրման բժշկական հակացուցումների ցանկը հաստատելու մասին» 24.02.2016թ. N05-Ն հրամանը, որը շրջաբերականով տրամադրվել է Երևանի քաղաքապետարանին, ՀՀ մարզպետարաններին և երեխաների բուժօգնություն և հսկողություն իրականացնող կազմակերպություններին:</p> <p>2. ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին բաշխվել են ՀՀ առողջապահության նախարարության պատվերով տպագրված վաղ հասակի երեխաների սնուցման վերաբերյալ «Հարց ու պատասխան» բուկլետներ մայրիկների համար (45000 տպաքանակով)՝ հանրապետության ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների կողմից հաշվառման վերցրած նորածինների մայրերին տրամադրելու համար:</p> <p>3. Նկարահանվել և հեռարձակվել են «Երեխաների թերսնուցումը», «Գերքաշությունը երեխաների մոտ» և «Հիվանդ երևեխայի սնուցում» ֆիլմերը՝ նախատեսված հեռուստադիտողների լայն շրջանակի համար, ինչպես նաև ևս 2 ֆիլմ՝ վաղ հասակի երեխաների սնուցման արդիական հարցերի վերաբերյալ՝ նախատեսված բուժաշխատողների համար:</p>
10.	<p>Հայաստանի ժողովրդագրական և առողջական հարցերի հետազոտության շրջանակներում երեխաների սնուցման կարգավիճակի գնահատում</p>	2016 թ.	<p>Հրապարակվել է Հայաստանի ժողովրդագրական և առողջական հարցերի հետազոտության արդյունքների նախնական զեկույցը, համաձայն որի նախորդ հետազոտության համեմատության մինչև 6 ամսական բացառապես կրծքով սնուցման ցուցանիշը աճել է 10%-ով, կազմելով 45%:</p>

11.	<p>Օրենքի դրույթների կատարման իրավիճակի ուսումնասիրություն և գնահատում՝ հասարակական սեկտորի ներգրավմամբ, (բժշկական կազմակերպություններ, առևտրի օբյեկտներ, մանկական սննդի պիտակներ, զանգվածային լրատվամիջոցներ, հարցումներ)</p>	<p>2016 թ. և շարունակական</p>	<p>«Վստահություն» ՀԿ-ի կողմից իրականացրել է ՀՀ Օրենքի դրույթների կատարման մոնիտորինգ Երևան քաղաքում և 4 մարզերում (Արագածոտն, Կոտայք, Արարատ և Արմավիր): Նախապես մշակված գործիքով ուսուցում անցած 12 դիտորդ հետազոտել են 20 առողջապահական հաստատություն, մոտ 50 մանրածախ վաճառքի կետ Երևան քաղաքում և մարզերում, հարցազրույց են վարել մինչև մեկ տարեկան երեխաների 234 մայրերի և 113 բուժաշխատողների հետ՝ կապված մանկական սնունդ արտադրող և ներկրող ընկերությունների վաճառահանման գործելաձևերի հետ ու վերլուծել են մանկական սննդի և հարակից ապրանքների պիտակները, բուժաշխատողների ու հասարակության համար հրատարակված տեղեկատվական նյութերը և լրատվամիջոցներում մանկական սննդի վերաբերյալ տեղեկատվությունը: Մոնիտորինգի արդյունքները ամփոփվել են զեկույցում և ներկայացվել կրճքով կերակրման խրախուսման հարցերը համակարգող միջսեկտորայ խմբի նիստում:</p>
-----	--	-------------------------------	--